1690
հայերեն

12

344 280 833-ԽՌ 344 1875-ՀՀ 3751

# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

## ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՀԱՄԵՄԱՏ ՕՐԻՆԱԿԻՆ ՏՊԵԱԼՈՅ Ի ՀՌՈՎՄ 1677։

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ Հ. Հ. ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ С.С.Р.А Публичная Библиотека 7/XI 1922 имени А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1823

264

# ՕՐԻՆՔ ԵՐԿԱՆԵՂՈՅ
## ՍՊԱՍ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել, պարտ է այսպէս խորհրդաբար զգեստաւորել:

Մտցէ յաւանդատունն, հանդերձ սարկաւագօքն, ուր զգեստքն են պատարագի: Եւ զգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի. ասասցեն զայս սաղմոս. ՃԼԱ.

ԿՑՈՐԴ

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

ՓՈԽ

Յիշեա՛ տէր զդաւիթ, և զամենայն հեզութիւն նորա:

Որպէս երդուաւ տն. և ուխտս եդ աստուծոյ յակոբայ:

Թէ ոչ մտից 'ի յարկս տան իմոյ. եթէ ելից յանկողինս մահճաց իմոց:

Թէ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտևանաց իմոց, կամ հանգիստ երանաց իմոց, մինչև գտից զտեղի յարկի տեառն այ յակոբայ:

Ահա լուաք զնմանէ յեփրաթայ. և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց:

Մտցուք 'ի յարկս նորա. երկիրպագցուք 'ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա:

Արի՛ տր 'ի հանգիստ քո՝ դու և տապանակ կտակի սրբութե քոյ:

Երիցունք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Վասն դաւթի ծառայի քոյ. մի՛ դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ:

Երդուաւ տէր դաւթի ճշմարտութե, և ոչ ստեաց նմա. 'ի պտղոյ որովայնի քոյ նստուցից յաթոռ քո:

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ, և զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա:

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո:

Հաճեցաւ տէր ընդ սիոն. և ընտրեաց բնակել 'ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. 'ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա:

Զայրիս սորա օրհնելով օրհնեցից, և զաղքատս սորա լցուցից հացիւ։

Քահանայից սորա զգեցուցից ըզփրկութիւն. և սուրբք սորա ցնծալով ցնծասցեն։

Անդ ծագեցից զեղջիւր Դաւթի, պատրաստ արարից ճրագ օծելոյ իմոյ։

Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, այլ 'ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ։

Եւ քարոզեսցէ սարկաւագն։

Եւս խաղաղութե̃ զՏ̃ր։

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ 'ի Տ̃է, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ 'ի վերայ մեր։ Ամենակալ Տ̃ր Ա̃ծ մեր կեցո́ և ողորմեա́։

Եւ ասասցեն երգասացքն՝

Տէր ողորմեա́։

Եւ քահանայն ասասցէ զաղօթս։

Որ զգեցեալ ես զլոյս որպէս ըզհանդերձ Տ̃ր մեր Յիսուս Ք̃ս. անճառելի խոնարհութեամբ 'ի յերկրի երեւեցար, և ընդ մարդկան շրջեցար։ Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի, և զարդարեցեր զեկեղեցի քո սուրբ։ Տէր ամենակալ որ պարգևեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ, արժանի արա և զիս 'ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո, որ համարձակիմ և մերձենամ 'ի նոյն հոգևոր պաշտօն փառաց քոց։ Որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց, որք են հանդերձք պղծութեան, և զարդարեցայց լուսով քով։ Ընկեա յինէն զչարիս իմ. և թօթափեա́ զյանցանս իմ, որպէս զի արժանի եղէց հանդերձելոյ լուսոյդ 'ի քէն։ Շնորհեա́ ինձ քահանայական փառօք մտանել 'ի պաշտօն սրբութե̃ց քոց ընդ այնոսիկ՝ որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո։ Զի և ես պատրաստ գտայց երկնաւոր առագաստին ընդ իմաստուն կուսանսն փառաւորել զքեզ Ք̃ս՝ որ բարձեր զմեղս ամենեցուն. զի դու ես սրբութիւն անձանց մերոց։ Եւ քեզ բարերարիդ Ա̃յ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ մատուցեալ սարկաւագունքն զգեցուսցեն նմա զհանդերձն սաղմոսելով։

Եւ դիցէ յառաջ զխոյրն 'ի գլուխն, և ասասցէ։

Դիր Տէր սաղաւարտ փրկութեան 'ի գլուխ իմ, պատերազմել ընդ զօրութիւնս թշնամւոյն։ Շնորհօք Տեառն մերոյ Յ̃ի Ք̃ի, որում վայելէ փառք, իշխանութ̃ի և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Շապիկն։

Զգեցո́ ինձ Տէր հանդերձ փրկութե̃, և պատմուճան ուրախութե̃, և շուրջ պատեա́ զզգեստու փրկութե̃։ Շնորհօք Տ̃ն մերոյ Յ̃ի Ք̃ի։

Գօտւոյն։

Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ և մտացս, և շիջուսցէ 'ի սմանէ զխորհուրդս աղտեղիս։ Եւ զօրութիւն շնորհաց քոց յամենայն ժամ բնակեսցէ

ցէ 'ի սոսա ։ Շնորհօք տեառն մերոյ յ՟ի ք՟ի ։

Բազպանին ։

Տո՛ւր տ՟ր զօրութիւն ձեռին իմոյ, և լուա՛ զամենայն աղտեղութիւնս իմ, որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութե՟ հոգւոյ և մարմնոյ ։ Շնորհօք տեառն մերոյ յ՟ի ք՟ի, ո՟րում ։

Ուրարին ։

Զգեցո՛ տ՟ր պարանոցի իմոյ զարդարութի՟, և սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց ։ Շնորհօք տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի ։

Նափորտին, որ է շուրջառն ։

Ողորմութեամբ քով զգեցո՛ ինձ զգեստ պայծառ, և պատրաստեա՛ ընդդէմ ներգործութեան չարին, զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ ։ Շնորհօք տեառն մերոյ յ՟ի ք՟ի ։

Յետ զգեստաւորելոյ սրբազան զգեստուքն՝ ասէ ։

Ցնծասցէ անձն իմ 'ի տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութե՟ և պատմուճան ուրախութեան ։ Իբրև փեսայի եդ ինձ պսակ, և որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս ։ Շնորհօք տեառն մերոյ յ՟ի ք՟ի ։


Appo T. Viero Venet.

# ԺԱՄԱՄՕՒՏՔ

Ըստ կարգի աւուրց պահոց, տօնից տէրունականաց, և անուանց սրբոց։

## ՊԱՀՈՑ։

Որ 'ի հօրէ առաքեցար փրկիչ՝ և մարմնացար 'ի սբ կուսէն․ որ վս մեր 'ի յերկնից իջեր՝ և լուսաւորեցեր զտիեզերս․ զխաղաղութիւն քո տուր մեզ տր, որ խաղաղութեանց ես թագաւոր․ զխաղաղութիւն և զողորմութիւն․ որ յամի ես դու կարող՝ մարդասէր։

## ՉՈՐԵՔՇԱԲԱԹ․ ԵՒ ՈՒՐԲԱԹ։

Որ ըստ ամ միտս անցանես․ ըզխաղաղութիւն քո ած՝ տուր մեզ հանապազ՝ զքեզ աղաչեմք։

## ՄԱՐՏԻՐՈՍԱՑ։

Ի տաճարի սրբոց, և յիշատակի սբց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք․ բարեխօսութեամբ սոցա և աղօթիւք զկենդանութիւն մեր խաղաղացո ած, որպէս մարդասէր։

## ՃԳՆԱՒՈՐԱՑ։

Ճգնաւորք քո, որք տանջանաց անօրինացն համբերեցիք․ և զմոլութիւն կռոցն խափանեցիք, լուսաւորեալք ընդ հրեշտակս 'ի յերկինս․ որք ունիք զհամարձակութիւն 'ի քէն, բարեխօսեցէք կեցուցանել զանձինս մեր․ զձեզ աղաչեմք։

## ԿԻՒՐԱԿԷԻ։

Միածին որդի և բանդ ած, և անմահ էութիւն․ որ յանձն առեր մարմնանալ 'ի սրբուհւոյ ածածնէն և 'ի միշտ կուսէն․ անփոփոխելի մարդ եղեալ խաչեցար քս ած․ մահուամբդ զմահ կոխեցեր․ մինդ 'ի սբյ երրորդութենէն փառաւորակից ընդ հօր և ընդ սբյ հոգւոյն․ կեցո զմեզ։

## ՍՏԵՓԱՆՆՈՍԻ։

Ցնծա այսօր՝ ցնծա և զուարճացիր կաթուղիկէ եղի՝ յիշատակաւ սբյն ստեփաննոսի նախավկային քոյ՝ վկայեցելոյ հօր․ որ աղօթիւք բանայր զերկինս, զոր փակեալ ադամ․ և հրեշտակակերպ տեսլեամբ տեսանէր զկերպարանն հօր 'ի կերպի ադամայ նստեալ յաթոռ փառաց․ որ զբազմութիւն քարանցն որպէս զծաղիկս հաւաքեալ բոլորէր պսակս փոխանակ փշոյն և եղեգանն։ Իս զմարութ-

բոսական արիւնն խառնէր ը՟ մէր-
կական արեանն քո՟ հոսեցելոյն ՚ի
կողէն ։ Վ՟ն որոյ գերազանցեալ ՚ի
փառս առաւել քան զմ՟ս՟ հայ-
ցեա՛ և մեզ ՚ի վերնատուողէն ըղ-
ձարգելս կենաց անվախճանից՝ և
զմ՟ծ ողորմութի՟ ։

ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ։

Յորովայնէ ընտրեալ՝ ս՟ր ստե-
փաննոս, յորովայնէ ընտրեալ՝ ս՟ր
ստեփաննոս, վկայ ճշմարիտ առա-
քելական քարոզութեանցն ։ որ ՚ի
վերայ անօրէն քարաձգողացն ա-
ղօթէիր առ ք՟ս ա՟ծ՝ մի՛ համարիր
սոցա զայս ՚ի մեղս ։ ՚ի ձեռն սորին
բարեխօսութեանն շնորհեա՛ մեզ
զմ՟ծ քո ողորմութի՟ ։

ԾՆՆԴԵԱՆ ։

Ա՟ծածին անհարսնացեալ, զբանն
անսկիզբն յղացար, և զա՟ծն անի-
մանալին ծնար ։ զանպարագրելին
՚ի գիրկս քո բարձեր, նմա անդա-
դար բարեխօսեա՛ վասն անձանց
մերոց ։

ԾՆՆԴԵԱՆ ։

Ա՟ծածին զքեզ խոստովանեալ
երկրպագէ եկեղեցի ուղղափառաց,
քանզի ուր քերովբէքն բազմա-
չեալք, և աթոռք հրանիւթք և
վեցթևեան սերովբէքն նայիլ ո՛չ
իշխէին, կրեցեր անսերմնապէս յա-
նապականութի՟ ՚ի յարգանդի քում
որպէս աղախին զտ՟ր, և ծնար որ-
պէս մարդ զա՟ծն բոլորից զմարմնա-
ցեալն առ ՚ի քէն՝ զանճառ զբանն,
՚ի փրկութիւն աշխարհի և կեանք
անձանց մերոց ։

ԾՆՆԴԵԱՆ ։

Աղաչեմք զքեզ ս՟ր կոյս մա-
րիամ ա՟ծածին ։ բարձրելոյն զօրու-
թ՟ն հովանաւորեալ, և ս՟բ հոգ-
ւոյն եկաւորութ՟ն լուսաւորեալ ։
որ զամենայն գոյութեանց զստեղ-
ծիչն յղացեալ ծնար անճառապէս ։
մարմնացելոյն առ ՚ի քէն բարե-
խօսեա՛ կեցուցանել զանձինս մեր ։

ՍԻՄԷՈՎՆԻ ։

Ծերունին այսօր սիմէովն՝ հոգ-
ւովն գայր ՚ի տաճարն, երևելով քե-
րովբէիցն վեհագոյն ։ որոյ թևօքն
սաւառնեալ ո՛չ իշխէին նայիլ ՚ի
յահեղ փառացն ։ սա՛ ՚ի գիրկս իւր
բարձեալ համբուրէր համարձակա-
պէս ։ և գգուէր որպէս զմանուկ ։
և աղերսելով հայցէր արձակիլ ՚ի
խաղաղութի՟ ։

ՏԵԱՌՆ ԸՆԴԱՌԱՋԻՆ ։

Անսկզբնական բանդ ա՟ծ ՚ի վեր-
ջին աւուրս յանձն առեր լինել
մարդ ՚ի կուսէն, և արարիչդ յա-
ւիտենից փակեցար ընդ ժամանա-
կաւ, տ՟ր տ՟ր սրբութեց, և անկա-
րօտ մաքրութեանց ։ եկիր ՚ի տա-
ճարն քառասնօրեայ զօրինացն կա-
տարեցեր զարդարութիւն, զոր
բարձեալ սիմէովնի զանպարագրե-
լիդ ՚ի գիրկս իւր՝ հայցէր ։ որ ար-
ձակիչդ ես կապելոց՝ արձակեա՛ զիս
՚ի խաղաղութի՟ ։ Վասն որոյ ընդ
ծերունւոյն սիմէովնի վերագոչեմք
առ քեզ տ՟ր ։ ս՟ր՝ ս՟ր՝ ս՟ր՝ տ՟ր զօ-
րութեանց ։ լի են երկինք և երկիր
փառօք քո ՚ի փրկութիւն մեզ ք՟ս
ա՟ծ ։ փառք քեզ ։

ԶՕՐԱԿԱՆԱՑ ·

Զօրական և վկայ ճշմարիտ՝ քաջ նահատակդ ք՟ի ս՟բդ Թէոդորոս․ որ փոխանակեցեր զմարմինդ ընդ հոգւոյդ քում փրկանս․ և ո՛չ ածեր զմտաւ զսպառնալիսն մաքսիմիանոսի թագաւորին․ այլ վերին ազդեցութեամբն՝ դիտելով զպարեցուածն հոգւոց նոցա, վասն այնորիկ լուցեր զտաճար կռոց նոցա։ Ընդ՝ 'ի յաղթօղ պատերազմի տօնողացս զօր նահատակութե՟ քոյ՝ բարեխօսեա՛ առ տէր վասն անձանց մերոց։

ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ ·

Գնալով փառաց քոց 'ի փառս՝ կաթուղիկէ եկեղեցի, դիմեալք 'ի սեբաստիա վերին․ ուր թագաւորեալքն յայդ նահատակին 'ի յամօթ և 'ի քարընկէց յերեսս բանսարկուին․ քաջալերելով զմիմեանս, զի մի՛ լուծեալ ոք բաղանեօք անցաւորիւ՝ պակասեսցի․ այլ գոտալով առաքինաբար զինքն ընդերձեալ յանխս ամենայն գանձուցն հոլովեցի, աղաղակելով առ ք՟ս, ընկա՛լ զորդեգրութի՟ ժողովրդեան մերոյ 'ի յոյս սիրողաց քոց․ ո՟ր փառք քեզ․

ՂԱԶԱՐՈՒ ·

Զղազարու զննջումն որպէս կանխագէտ յառաջ ասէիր․ զի և 'ի բեթանիայ յառաջէիր, զի յարուսցես զսիրելին քո․ և քեզ գոչելով ասեմք՝ օրհնեալ որ գաս 'ի չարչարանս կամաւ հօր 'ի փրկութիւն անձանց մերոց։

ՂԱԶԱՐՈՒ ·

Յորժամ եկեալ կենարարն 'ի գերեզմանն ղազարու՝ յորժամ եկեալ կենարարն 'ի գերեզմանն ղազարու՝ աւետաւոր ձայնիւն աղաղակէր ասելով․ ղա՛զարէ արի՛ եկ արտաքս։ Իսկ մեռեալն 'ի գերեզմանէն յարեաւ․ և նոյն ինքն զանմահութի՟ պարգևեաց սիրելւոյն․ և ամենայն ձայնիւն 'ի գերեզմանէն կոչեաց․ վասն որոյ և մանկունք եբրայեցւոց՝ ոստովք օրհնէին զանմահ թագաւորութի՟ քո․ ովսաննա օրհնեալ է գալուստ քո՝ օրհնութիւն 'ի բարձունս․ օրհնեալ որ գալոցդ ես անուամբ տեառն։

ԾԱՂԿԱԶԱՐԴԻՆ ·

Ցնծա՛ երուսաղէմ, և զարդարեա՛ զառագաստ քո սիոն․ քանզի ահա թագաւոր քո ք՟ս նստեալ 'ի յաւանակի նորոյ հեզութի՟ ցուցանելով և գայ մտանէ յառագաստ քո սիոն, և մեք աղաղակեմք՝ ովսաննա օրհնեալ եկեալ 'ի յանուն տ՟ն, որ ունի զմեծ զողորմութի՟․

ԶԱՏԿԻՆ ·

Ք՟ն յարեաւ 'ի մեռելոց․ մահուամբ զմահ կոխեաց, և յարութե՟ իւրով մեզ կեանս պարգևեաց․ նմա փառք յաւիտեանս ամէն։

ՅԻՆԱՆՑՆ ·

Ահաւոր և սքանչելի է խորհուրդ փրկութե՟ մերոյ․ որ անսկիզբն 'ի հօրէ անճառաբար մարմնացաւ 'ի կուսէն, խաչի համբե-

բերով, և կամաւոր մահուամբ խ-
բով զկենդանութեան մեզ պար-
գևեաց շնորհս ։

ՑԻՆԱՆՑՆ ։

Բանզի յարեար 'ի մեռելոց քս̃
ած̃ յաւիտենից արարիչ, և յա-
րութ̃ն ազգի մարդկան․ զոր օրհ-
նեն անդադար զինուորութիւնք հրեշ-
տակաց, և ամ̃ զուարթունք երկ-
նից․ ը̃ որս գոչելով ասեմք, փառք
սոսկալի յարութեան քո տ̃ր ։

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ։

Հիացան վերնական բազմութիւնք
տեսանելով զքեզ 'ի հրեղէն կառս
բարձեալ՝ սաւառնեալ ասէին, ո՞վ է
սա՝ որ դիմեալ գայ յեդովմայ, և
եկեալ մտանէ փառօք 'ի փառս․
տէ՛ր փառք քեզ ։

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ։

Որ յանպատում յաթոռ նստիս՝ և
յանմարմնոց վերօրհնիս, անհաս-
նելի բանդ ած̃, 'ի յերկիր երևե-
ցար ճշմարիտ մարդ՝ զտնօրէնութ̃ն
կատարեալ զխորհուրդ․ խաչի և
մահու համբերեցեր․ և զհրաշալի
զյարութ̃ն քո ցուցեր հզօր զօ-
րութ̃․ այսօր համբարձար փա-
ռօք 'ի յերկինս, և զկուսածին ըզ-
մարմինդ քո հրաշափառապէս լու-
սազարդեցեր․ զոր տեսեալ եսայ-
եաս՝ նախաձայնեալ ասէր, ո՞վ է
սա՝ որ դիմեալ գայ յերկրէ․ հա-
ցեալ պետութ̃ց երկնից՝ գոչէին
առ միմեանս․ համբարձէ՛ք իշխանք
զդրունս ձեր 'ի վեր, և մտցէ թա-
գաւոր փառաց ։ Ամլ̃ որ յամ̃ի կա-
րողդ ես՝ և հզօր, շնորհեա՛ և մեզ
համբերել քեզ ամպովք 'ի միւ-
սանգամ քո գալստեանդ․ որ մի-
այնդ ես մարդասէր ։

ՀՈԳՒՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ ։

Ած̃ զքեզ խոստովանիմք զտ̃ր
հոգիդ՝ և երկրպագանեմք․ որ ես
պատճառ կենդանութ̃ե եղելոցս՝
և խաղաղարար աշխարհի․ որ ըզ-
տգիտութիւն աշակերտացն բա-
զում գիտութ̃ լցեր․ և 'ի հրե-
ղէն լեզուս բաժանեալ անճառե-
լեօք ցուցար նոցա․ աղաչեմք
տ̃ր, խնայեա՛ և կեցո՛ զմեզ ։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ ։

Այսօր 'ի հրեղէն լեզուս բաժա-
նեալ հանգեաւ յառաքեալսն լու-
սաւորելով զնս̃․ և այժմ աղաչեմք
զքեզ տ̃ր ած̃՝ որ ես պատճառ
կենդանութ̃ե եղելոցս և խաղա-
ղարար աշխարհի, խնայեա՛ և կե-
ցո՛ զմեզ ։

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ ։

Սան որոյ և մեք զհոգին տ̃ր
ընդ հօր միաւորեալ, և ը̃ որդւոյ
միասնական խոստովանիմք․ և հայ-
ցեմք 'ի վերնատուողէդ մեզ զհո-
գևորական զխաղաղութիւնդ․ տ̃ր
փառք քեզ ։

ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ։

Որք ծագեցան մեզ յարևմտից
ո̃պ զարեգակն․ և լուսաւորեցին
համանգամայն զաշխարհս հայաս-
տանեայց, փարատեցին զխաւարն
անգիտութ̃ե կռապաշտութ̃ե․ և
լուսաւորեցին զամ̃ հոգի հաւա-
տով ած̃գիտութ̃ե․ սոցա բարե-
խօսութ̃բն քս̃ ած̃, պարգևեա՛ աշ-

խարհի քում զխաղաղութիւն. և անձանց մերոց զմեղաց զթողութի՟ որպէս մարդասէր տ՟ր.

ԳԱՅԻԱՆՆԵԱՆՑ.

Զյաղթական զձեր զհանդէս զուարճացեալ տօնէ եկեղեցի տ՟ր. քանզի սրբութե՟ սատացայք զկուսութի՟. և 'ի մարմնի զանմարմնոցն ցուցէք զհանդէս.

ԿՈՒՍԱՆԱՑ.

Պարմանացեալք ք՟ի երկնաւոր փեսային, զսաէրք վերին սիրին. խնդրեցէ՛ք 'ի ք՟սէ զհաշտութիւն և զմեծ զողորմութիւն.

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻՆ.

Զյառաջընթացութիւն քո և զկատարելութիւն ա՟յ բանին խափանել կարծելով. որ 'ի ձեռն կնոջն զնախաստեղծն 'ի դրախտէն արտաքս ընկէց. նաև այժմ զհեբովլխաղայ անօրէնութե՟ բորբոքեալ, և բազմելոյն հերովդիայ՝ զկաքաւս տոլիկ աղջկանն հաճոյացոյց, զի զքեզ հատցէ զգլուխ. որ զամենեցուն ձեռնադրեցեր ըզգլուխն զքո՛. Այլ դու, որ յանապատէ բարբառոյ ձայն, գոչեա՛ որում ձեռնադրեցեր. պարգևել զխաղաղութի՟ և զմեծ զողորմու՟թ.

ՄԱՐԳԱՐԷԻՑ.

Տէ՛ր՝ որ հիմնեցուցեր զեկեղեցի քո 'ի վ՟ր վիմին հաւատոյ, և կարգեցեր 'ի սմա առաքեալս՝ և մարգարէս. հովիւս և վարդապետս 'ի հաստատութիւն սրբոյ. և ձգնութե՟ վկայից զթշնամին սորա վանեցեր. 'ի խաղաղութեան զսա պահեա՛ ա՟ծ որպէս մարդասէր.

ԱՌԱՔԵԼՈՑ.

Առաքեալք և վկայք ք՟ի ա՟յ ամենակալ հոգւոյն զօրութե՟ն զամենեսեան ընդհանուր յորդէգրութիւն կենաց կոչելով՝ վկայականս տ՟ր երրորդութե՟ն յորդորեցին երգել զփառս 'ի յաւիտեանս. ամէն.

ՀԱՅՐԱՊԵՏԱՑ.

Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ 'ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ՝ ծառայ ք՟ի ո՛վ երանելիդ 'ի հարս տ՟ր հայրապետ. քանզի քո վարդապետութե՟դ սերմանք՝ բարեպաշտութե՟ բուսուցին հասկս, ուղղափառութե՟ պտուղ հասուցանելով. և հաւատացելոցս զփրկութի՟ շնորհելով. վ՟ն որոյ բարեխօսեա՛ առ տ՟ր վ՟ն անձանց մերոց.

ԵԿԵՂԵՑՒՈՅ.

Զխաղաղութի՟ շնորհեա՛ եկեղեցւոյ քում սրբոյ. զխաղաղութի՟ և զանշարժութիւն 'ի թշնամեաց պատերազմէ. և հաստատեա՛ 'ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք տ՟ր և ա՟ծ՝ կեցո՛ զմեզ.

ՎԱՐԴԱՎԱՌԻՆ.

Երևի տ՟ր այսօր աշակերտացն 'ի թաբօրական լերինն. և աշակերտացն զարհուրեալ աղաղակէին ասելով, արասցուք երիս տաղաւարս. մի ք՟զ, և մի մովսէսի, և մի եղիայի. Եւ մեք բանաւոր հօտքս

երգեմք ընդ քո ճշմարիտ վկայիդ. առաքեա՛ 'ի մեզ զլոյս քո շնորհացդ 'ի քոյ միւսանգամ գալըստեանդ և կեցո՛ ։

ԽԱՉԻ ։

Առաջինպատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդառնապարտութիւն ազգի մարդկան ։ Եւ այժմ վասն ս՟րյ ա՟ծային քոյ նշանին՝ շնորհեա՛ զերկնային զխաղաղութիւն ա՟մ աշխարհի ։

ՈՐԴԻՈՑՆ ՈՐՈՏՄԱՆ ։

Այսօր ահաւոր ձայնք որոտման հնչեցին յերկնից 'ի յերկիր կոչելով յորդեգրութիւն զձեզ որդիք սիոնի. հաստատութի՟ հաւատոյ, և պարծանք եկեղեցւոյ. որք ցօղով արեան ձերոյ՝ մաքրեցիք զախտերս յանօրէն կռապաշտութենէ ։ Արդ՝ հայցեցէք 'ի ք՟է զքաւու՟ն տօնողացս անուան ձերոյ. մաղթանօք սոցա տ՟ր խնայեա՛ 'ի փրկեալ քո ժողովուրդս, որ միայն ես մարդասէր ։

ՀՐԵՇՏԱԿԱՑ ։

Զոր օրհնեն անլռելի ձայնիւ իմանալի զօրութիւնք, երկնաւոր նահապետութիւնք՝ հրեշտակք՝ և հրեշտակապետք, աթոռք՝ և տէրութիւնք, իշխանութիւնք՝ և պետութիւնք, սերովբէք՝ և քերովբէք զամենամ՟ր զերրորդութիւն, և զմի ա՟ծութի՟ ։

ՀՐԵՇՏԱԿԱՑ ։

Այսօր երկրաւորս եկեղեցւոյ քահանայապետութի՟ ցնծայ հրաշափառապէս՝ զերկնաւոր քահանայապետութեանցն կատարելով զտօնախմբութի՟ տօնս, անմարմնական դասուց հրեղինացդ՝ մարմնականքս և հողեղէնքս, մ՟լ տ՟ր գաբրիէլ և միքայէլ մեծք, հրեշտակապետք բարձրելոյն, որք կայք առաջի աթոռոյ ա՟ծութեն. անդադար բարեխօս լերուք վասն մեր առ տէր, վերաբերել զամենսեան ընդ ձեզ յերկնից արքայութի՟ն, և միաձայն բարբառով երգել զփառս ։

ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ։

Գրիգոր սուրբ քահանայապետ՝ որ զհաւատս ուսուցեր, և զբանակս դիւային հալածեցեր. մարդկան ուսուցեր քարոզել զերրորդութիւնն. պսակեցար յարքայութեն. արդ՝ բարեխօս լեր առ տ՟ր վասն մեր ։

ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑՆ ։

Որ 'ի վ՟ր քերովբէիցն հանգչիս, և 'ի զօրացն հրեղինաց օրհնաբանիս, իջեր 'ի բաբելոն և փրկեցեր զերիս մանկունսն 'ի հրոյն բռնութե՟. որք աղաղակելով գոչէին երգ նոր, ա՟մ գործք օրհնեցէք և բարձր արարէք ։ Թագաւոր փառաց ք՟ս և արարիչ բոլորից. որ մարդասիրապէս գթացար 'ի ս՟ր մանկունսն, փրկեցեր 'ի բորբոքեալ բոցոյն. որք անարգեցին զբռնութի՟ թագաւորին, և շիջուցին զզօրութի՟ հրոյն. ը՟ նոսին և մեք քեզ վերագոչեմք, փրկեա՛ զմեզ 'ի հրոյն յաւիտենից ։ Զի դու միայն ես բազմագութ տէր՝ քեզ փառք յաւիտեանս. ամէն ։

Եւ յետ զգենլոյ սրբութեան զգեստուցն, եկեսցէ առաջի սրբոյ սեղանոյն,
Եւ քահանայն լուասցէ զձեռս ասելով. Սաղ. ԻԵ։

Լուացից սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ եկեց զսեղանովդ քո Տէր։

Սարկաւագն։

Դատ արա ինձ Տէր, զի․ եւ այլն։

Տուն առ տուն զփոխն 'ի լման։

Քահանայն։

ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՄԲ սրբուհւոյ Ածածնին տէր ընկալ զաղաչանս մեր եւ կեցո զմեզ։

Սարկաւագն։

ԱՌ՝ զԱծածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր 'ի յերկինս, զի կամեսցի ողորմեսցի, եւ գթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ տէր Ած մեր կեցո եւ ողորմեա։

Քահանայն։

Ընկալ Տր զաղաչանս մեր բարեխօսութեամբ Տր Ածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քոյ․ եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց, (եւ որոց այսօր է յիշատակ․) լուր մեզ Տր եւ ողորմեա, ներեա, քաւեա, եւ թող զմեղս մեր։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ որդւոյ՝ եւ ընդ Սբ Հոգւոյդ․ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից․ Ամէն։

Եւ ապա խոնարհեալ պատարագիչ քահանայն առաջի այլոց քահանայիցն առընթեր կացելոցն՝ ասէ։

Խոստովանիմ առաջի Այ, եւ սրբուհւոյ Ածածնին, եւ առաջի ամենայն սրբոց, եւ առաջի ձեր հարք եւ եղբարք, զամենայն մեղս զոր գործեալ եմ։ Քանզի մեղայ խորհրդով, բանիւ, եւ գործով, եւ ամենայն մեղօք, զոր գործեն մարդիկ, մեղայ, մեղայ։ Աղաչեմ զձեզ՝ խնդրեցէք վասն իմ յԱյ զթողութիւն։

Պատասխանեն որք մերձ են։

Ողորմեսցի քեզ Ած հզօրն, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն, եւ այժմուս, եւ յառաջիկայէն փրկեսցէ զքեզ, եւ հաստատեսցէ յամենայն գործս բարիս, եւ հանգուսցէ ընդ քեզ 'ի հանդերձեալ կեանս․ Ամէն։

Պատասխանեսցէ և ինքն ։

Ազատեսցէ և զձեզ մարդասէրն ած, և թողցէ զամենայն յան-ցանս ձեր ։ Տացէ ժամանակ ա-պաշխարելոյ և գործելոյ զբարիս ։ Ուղղեսցէ և զառաջիկայ կեանս ձեր շնորհօք սր հոգւոյն, հզօրն և ողորմածն, և նմա փառք յաւի-տեանս ։ Ամէն ։

Դպիրքն ։

Յիշեսջի՛ր զմեզ առաջի անմահ գառին աստուծոյ ։

Քահանայն ։

Յիշեա՛լ լիջիք առաջի անմահ գա-ռին այ ։

Դպիրքն ։ Սաղմոս . ղծ . փոխ ։

Աղաղակեցէք առ տէր ամենայն երկիր . և այլն ։

Սարկաւագն քարոզէ ։

Ս եկեղեցեաւս աղաչեսցո՛ւք զտր, զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ո-ղորմութե իւրոյ . ամենակալ տր ած մեր կեցո՛ և ողորմեա՛ ։

Քահանայն ։

Ի մէջ տաճարիս և առաջի ած-ընկալ և պայծառացեալ սր նշանացս և սուրբ սեղանոյս, խո-նարհեալ երկիւղիւ երկրպագա-նեմք, զսուրբ զհրաշալի և զյաղ-թօղ զտէրութիւնդ քո փառաւո-րեմք ։ Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ . այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Քահանայն . սաղ . խբ . կցորդ ։

Մտից առաջի սեղանոյ ։

Սարկաւագն ։

Դատ արա ինձ ած . և այլն ։

Տուն առ տուն զփոխն 'ի լման ։

Սարկաւագն քարոզէ ։

Եւ ևս խաղաղութե զտր ։
Օրհնեսցուք զհայր տն մերոյ յսի քսի, որ արժանի արար զմեզ կալ 'ի տեղւոջ փառաւորութեան, և երգել զերգս հոգևորս . ամենա-կալ տր ած մեր կեցո՛ և ողորմեա՛ ։

Քահանայն ։

Ի յարկի սրբութե, և 'ի տեղ-ւոջ փառաւորութե, հրեշ-տակաց բնակարանիս, և մարդկան քաւարանիս . առաջի ածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ սեղանոյս խոնարհեալ եր-կիւղիւ երկրպագանեմք, զսուրբ զհրաշալի և զյաղթօղ զյարու-թիւնդ քո փառաւորեմք ։ Եւ քեզ մատուցանեմք զօրհնութի և զփ-առս ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ . այժմ և միշտ և յաւի-տեանս յաւիտենից ․ Ամէն ։

*Իսկ եթէ եպիսկոպոս լիցի խորհրդածուն, առցէ զՍր կոնքեան, եւ ածցէ 'ի վերայ լանջացն եւ զգա-տուական եմիփորոնն, եւ եկեսցէ առընթեր ըն-ծայարան սեղանոյն, լուացեալ զձեռս: Եւ մա-տուցեալ առաջի սեղանոյն, լուռ եւ անմռունչ ա-սասցէ զաղօթս առ Տր Հոգին անօրինակ գործոյն:*

Ամենակալ բարերար մարդասէր Ած բոլորից, յօրինող երեւութից եւ աներեւութից, փրկող եւ հաստատող, խնամող եւ խաղաղարար Հօր հզօր Հոգի: Հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութե՛ յանդիման եղեալ քեզ ահաւորիդ: Մատչիմք մեծաւ դողութեամբ, սաստիկ երկիւղիւ, մատուցանել նախ զբանականս զայս պատարագ՝ քում անզննին զօրութեանդ, իբր աթոռակցի փառակցի եւ արարչակցի՝ Հայրենի անկապուտ պատուոյդ, եւ քննողի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց Հօրդ եմմանուէլի՝ զքեզ առաքչի, փրկչի եւ կենդանատուի, եւ արարչի ամենայնի: 'Ի ձեռն քոյ ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն միասնական Ածութեդ: յորոց մի եւ դու ճանաչիս անհաս: Քեւ, եւ 'ի ձեռն քո առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք՝ տեսանողք անուանակոչեալք, զանցեալսն եւ զգալոցսն անստուերաբար բարբառով բանի վերապատմեցին: Հոգի ԱՅ քարոզեալ զքեզ Մովսէսի, որ 'ի գնալն քո 'ի վերայ ջրոցն՝ անպարագիր զօրութիւն, ահեղ շրջարկութեամբ տածողականաւ, թեւապարփակ պաշտպանողօրէն զթամիրեալ 'ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանուցեր:

Յոր կերպարան օրինակութեան՝ նախ քան զկատարումն զայծմածուած վերջնում վարդապետիդ, յօրինեցեր կարող տիրապէս զբովանդակ բնութիս ամենից բնաւից բոլորից գոյից ամենայն էից՝ յանէից: Քեւ սահմանին 'ի նորոգութիւն յարութեան ամենայն եղեալքս առ 'ի քէն, յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղի, եւ որ առաջին՝ երկրին կենդանեաց: Քեզ հնազանդեցաւ միութեամբ կամացն որպէս Հօրն իւրում, ազգակիցն քո՝ էակիցն Հօր՝ անդրանիկն որդի՝ մերով կերպիւ զքեզ աւետարանեաց ճշմարիտ Ած՝ հաւասար եւ համագոյ Հօր իւր հզօրի: Եւ զառ 'ի քեզ հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց: Եւ իբր զԱծամարտիցն զքո հեստեղոյն՝ չարաբանական բերանս կարկեաց: Եւ զիւրն շնորհեաց՝ արդարն եւ անարատն՝ դատիչն ամենայնի: որ վասն մեղաց մերոց մատնեցաւ: Եւ յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ: Նմա փառք 'ի ձեռն քո, եւ քեզ բարեբանութիւն ընդ Հօր ամենակալի, յաւիտենից յաւիտեանս: Ամէն:

*Դարձեալ կրկնեսցի 'ի նոյն կարգ բանի, մինչեւ վստահութիւնն լուսոյ հրաշալիս յայտնեսցի ազդեալ աւետարանել վերստին զկրկին խաղաղութիւն:*

Աղաչեմք եւ աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ՝ զփառաւորեալ արարչութիդ՝ անեղծ եւ անստեղծ՝ անժամանակ հոգւոյդ գթածի: Որ բարեխօսդ ես վասն մեր յանմռունչ հեծութիւն՝ առ ողորմածդ Հայր: Որ զսրբս պահես,

և զմեղուցեալս մաքրեա՛ և տաճարս կազմեա կենդանի և կեցուցիչ կամաց բարձրելոյ Հօր։ Արդ՝ աղաչեմ զքեզ յամենայն անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան. և մի՛ շիջցին առ՚ի մէնջ՝ լուսոյդ շնորհաց փայլմունք՝ ՚ի տեսականացս աչաց իմաստից. վասն զի զքեզ ուսաք միանալ ՚ի մեզ ՚ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց։ Եւ քանզի մեզ յերրորդութէդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթեվանս պատուականս ամենայն պատրաստութեամբ ՚ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոց դատապարտութեան ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեն։ Եւ հալեսցի՛ ՚ի հրոյս յայսմանէ զայթակղութիս մեր, որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն, ՚ի ձեռն ունելեացն մատուցման. զի ամենայնի քոյդ քաղցրեսցի գթութի, ոմ որդւոյդ այ՝ հօր քաղցրութի. որ զանառակ որդին միրձեցոյց ՚ի հայրենի ժառանգութիւնն, և ըզպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն՝ արդարոցն երանութեան։ Այո՛ այո՝ և ես մի եմ ՚ի նոցանէ, և զիս ընկա՛լ ընդ նոսին, իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ամրեալ զարեամբ քո՛ ստացեալս։ Զի յայսմ ժմի՝ յամի ծանիցի քո ածութիդ, ընդ հօր փառաւորեալ համապատուարար ՚ի մի կամս, և ՚ի մի իշխանութիւն գովութեան։

՚ի ձայն ։

Զի քո է գթութի, և կարողութիւն, և մարդասիրութիւն, զօրութի, և փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

*Այս յորուցեալ եկեսցէ առ ընծայարան սեղանոյն, առ որ մատուցեալ նախատարկաւագն ըզնշխարն, զոր առեալ քահանայն դիցէ ՚ի մաղզմայն. ասելով։*

## Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

*Եւ առեալ զգինին արկցէ խաչանիշ ՚ի սկիհն։ Նոյնպէս և սակաւիկ մի ջուր արկցէ, ասելով։*

## Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան ամն այ, և փրկչին մերոյ յսի քսի։

*Եւ ասասցէ զաղօթս ՚ի ծածուկ Յովհաննու ոսկեբերանին։*

Աստուած մեր, որ զերկնաւոր հացդ, զտր մեր յսի քսի զկերակուրդ ամ աշխարհի առաքեցեր փրկիչ և կեցուցիչ և բարերար, օրհնել և սրբել զմեզ։ Ինքնին դու տր օրհ✠նեա՛ և այժմ զառաջադրութիւնս զայս։ Ընկա՛լ զսա յերկնային քո սեղանդ։ Յիշեա՛ որպէս բարերար և մարդասէր զմատուցօղս, և վասն որոց մատուցանի։ Եւ զմեզ անդատապարտ պահեա՛ ՚ի քահանայագործութիւն ածային խորհրդոյ քոյ։ Զի սուրբ և փառաւոր է ամենապատիւ մեծվայելչութիւն փառացդ հօր, և որդւոյ, և հոգւոյդ սբյ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ դպրելոցն ասել.

Տէր թագաւորեաց, զվայելչութիւն. և այլն:

Եւ արկցէ խունկ ասելով.

Խունկ մատուցանեմ առաջի քո քս ած բուրումն հոգեւորական: Ընկալ 'ի մր յերկնային, և յիմանալի քո մատուցարանդ 'ի հոտ անուշից: Առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս, և զպարգեւս հոգւոյդ սրբոյ: Եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սբյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ երիցս երկրպագեալ քահանայն, համբուրեսցէ զսեղանն:

Եւ սարկաւագն կացեալ 'ի մէջ տաճարին, ձայնեսցէ ասելով.

Օրհնեա տէր:

Եւ քահանայն 'ի ձայն ասասցէ.

Օրհնեալ թագաւորութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Եւ սկսցին այլ եկեղեցականքն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն:

Եւ յաւարտման երգոյն քարոզէ սարկաւագն:

Եւս և խաղաղութեան զՏր:

Ժողովուրդն: Տէր ողորմեա:
Սարկաւագն: Կեցո և ողորմեա:
Ժողովուրդն: Կեցո տէր:
Սարկաւագն: Օրհնեա տէր:

Եւ քահանայն ասասցէ զաղօթս:

Տր ած մեր, որոյ կարողութիւնդ անքննին է, և փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է, և գթութիւնդ անբաւ: Դու ըստ առատ մարդասիրութեան քում, նայեա 'ի ժողովուրդս քո, և 'ի տաճարս յայս սբ: Եւ արա ընդ մեզ, և ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն քո, և զգթութիւն: Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Քահանայն ասասցէ խորհրդաբար.

Տր ած մեր, կեցո զժողովուրդս քո և օրհնեա զժառանգութիւնս քո, զլրումն եկեղեցւոյ քո պահեա, սրբեա զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո: Դու զմեզ փառաւորեա ածային զօրութեամբ քով. և մի թողուր զյուսացեալսն 'ի քեզ: Զի քո է կարողութիւն, և զօրութիւն, և փառք, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն ✠ ամենեցուն:

Որ հասարակաց զայս, և միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել, և զերկուս և զերիս միաձայնելոց յանուն քո զխնդրուածս պարգեւել խոստացար: Դու և այժմ զծառայից քոց խնդրուածս առ 'ի յօգուտ կատարեա, շնորհելով յայսմ յաւիտենիս զգիտութիւն քում ճշմարտութեան, և 'ի հանդերձեալն զկեանս յաւիտենականս պարգեւելով: Զի բարերար և մարդասէր ես ած. և քեզ վայելէ փառք, իշխանութիւն, և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:



ՀԱՅԿ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Եւ ապա ասասցի շարականն ըստ պատշաճի աւուրն:
Եւ 'ի մէջ տանն երթիցեն առաջի բեմին, և երկրպագցեն երիցս:

Եւ քահանայն ասասցէ զաղօթս:

Տ՟ր ա՟ծ մեր, որ կարգեցեր յերկինս զդասս, և զզինուորութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց 'ի սպասաւորութիւն փառաց քոց: Արա՛ այժմ ընդ մուտս մեր մտանել և ս՟բց հրեշտակաց, և լինել պաշտօնակից մեզ և փառաբանակից քում բարերարութեան:

'Ի ձայն:

Զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. Ա՟մն:

Եւ համբուրեսցեն զսեղանն, և յաւարտման շարականին՝ գոչեսցէ սարկաւագն:

Պռօսխումէ:

Եւ ասասցեն զերեքսրբեանն ձայնիւ:

Ս՟բ ա՟ծ, ս՟բ և հզօր, ս՟բ և անմահ, ողորմեա՛ մեզ:

Եւ քահանայն զոյգ սմին ասասցէ 'ի ծածուկ զաղօթս:

Ա՟ծ ս՟բ, որ 'ի ս՟բս հանգուցեալ ես, և երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ, և քերովբէք փառաբանեն, և ամենայն երկնային զօրութիւնքն քեզ երկիրպագանեն: Որ 'ի չգոյէ 'ի գոյ ածեր զամենայն արարածս: Որ արարեր զմարդն ըստ պատկերի քում, և նմանութեան, և ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր, և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զգօնութ՟ի. և ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եդեր 'ի վերայ նորա զապաշխարութիւն փրկութեան: Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ և զանարժան ծառայքս քո 'ի ժամուս յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ, և զօրհնաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ: Դու տէր ընկա՛լ 'ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւնս, և պահեա՛ զմեզ քոյին քաղցրութեամբդ: Թո՛ղ մեզ զամենայն յանցանս մեր զկամայ և զակամայ: Սրբեա՛ զհոգի զմիտս և զմարմինս մեր. և շնորհեա՛ 'ի սրբութեան պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց. բարեխօսութեամբ սրբուհւոյ ա՟ծածնին, և ամենայն սրբոց քոց, որք յաւիտենից քեզ բարեհաճոյացան: Զի տ՟ր ես տ՟ր ա՟ծ մեր, և քեզ վայելէ փառք, իշխանութ՟ի և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ա՟մն:

Եւ սարկաւագն քարոզեսցէ:

Եւ ևս խաղաղութ՟ն զՏ՟ր:
Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի:

Սարկաւագն ձայնեսցէ:

Օրհնեա՛ տ՟ր:

Եւ քահանայն բազկատարած ասասցէ 'ի ծածուկ զաղօթս:

Տ՟ր ա՟ծ մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս, և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում: Զգթութիւն քո առաքեա՛ 'ի վերայ մեր և ամենայն ժողովրդեանս, որք ակնունին առ 'ի քէն առատ ողորմութեդ:

[library stamp]

'Ի ձայն.

Որ ողորմած և մարդասէր ես ա՟ծ գոլով. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ քահանայն նստի յաթոռն։ Եւ սկսցին սաղմոս։ Այսօրդ. ըստ խորհրդոյ աւուրն։ Եւ ընթերցցին գիրս մարգարէականս, և առաքելականս։ Եւ զկնի ալէլու ըստ ցուցանելոյ ընթերցուածոյն։ Եւ յաւարտմանն՝ սարկաւագն բարձր ձայնիւ գոչեսցէ.

Օրթի.

Քահանայն դարձցի 'ի խորանէն, և խաչակնքեսցէ 'ի վերայ ժողովրդեանն. և ասասցէ.

Խաղաղութիւն ✠ ը՟ ամենեսեան։

Ժողովուրդն. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն. Երկիւղածութ՟բ լուարուք։

Սարկաւագն.

Սրբոյ աւետարանիս ըստ Մատթէոսի։

Ժողովուրդն. Փառք քեզ տ՟ր ա՟ծ մեր։

Սարկաւագն. Պռօսխումէ։

Ժողովուրդն. Ասէ օթէօս։

Եւ սարկաւագն ընթերցցի զաւետարանն. և յաւարտն ասասցեն ամենեքեան։

Փառք քեզ տ՟ր ա՟ծ մեր։

Եւ ասասցեն զՀաւատամքն։

Հաւատամք 'ի մի ա՟ծ հայրն ամենակալ. յարարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից։ Եւ 'ի մի տ՟ր յ՟ս ք՟ս, յորդին ա՟յ, ծնեալն յա՟յ հօրէ՝ միածին նախ քան զամենայն յաւիտեանս։ Ա՟ծ յա՟յ, լոյս 'ի լուսոյ, ա՟ծ ճշմարիտ, յա՟յ ճշմարտէ ծնունդ՝ և ոչ արարած։ Նոյն ինքն համագոյակից հօր, որով ա՟մ ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի՝ երևելիք և աներևոյթք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ 'ի յերկնից, մարմնացաւ՝ մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի մարիամայ սրբոյ կուսէն՝ հոգւովն սրբով։ Որով էառ մարմին, հոգի, միտք, և զա՟մ որ ինչ է 'ի մարդ. ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր՝ դատել զկենդանիս և զմեռեալս։ Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաւատամք և 'ի ս՟բ հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն, որ 'ի հօրէ և յորդւոյ բղխի։ Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն 'ի յորդանան, քարոզեաց զառաքեալն, և բնակեցաւ 'ի ս՟բս։ Հաւատամք և 'ի մի միայն ը՟հանրական և յառաքելական եկեղեցի։ 'Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն՝ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։ 'Ի յարութիւն մեռելոց։ 'Ի դատաստանն յաւիտենից, հոգւոց և մարմնոց։ Յարքայութիւնն երկնից. և 'ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր ս՟բ հոգին։ Կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութէ ասեն լինել զորդին ա՟յ, և կամ զս՟բ հոգին։ Եւ թէ փոփո-

խելի են՝ կամ այլայլելի, զայնպիսին նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի։

Լուսաւորչին։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով սբյ երրորդութեն, և մի ածութեն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Ժողովուրդն։ Ամէն։

Եւ սարկաւագն քարոզեսցէ 'ի ձայն։

Եւ ևս խաղաղութե զտր։

Ժողովուրդն։ Տէր ողորմեա։

Սարկաւագն։ Եւ ևս հաւատով։

Մինչ նոքա երգեն, քահանայն աղօթս ասէ 'ի ծածուկ։

Տր մեր և փրկիչ յս քս, որ մեծդ ես ողորմութեամբ, և առատ պարգևօք բարերարութեան քոյ։ Որ դու քոյին կամաւ 'ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց, խաչի, և մահու՝ յաղագս մեղաց մերոց. և պարգևեցեր առատապէս զպարգևս հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն։ Հաղորդս արա և զմեզ տր, աղաչեմք զքեզ՝ ածային պարգևացդ, թողութեան մեղաց, և ընդունելութեան հոգւոյդ սրբոյ։

'ի ձայն։

Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութի ✠ ամենեցուն։

Խաղաղութե քով քս փրկիչ մեր, որ 'ի վեր է քան զմտս և զբանս՝ ամրացո զմեզ, և աներկիւղ պահեա յամ չարէ։ Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգւով և ճշմարտութե քեզ երկրպագանեն։ Զի ամենասբ երրորդութեանդ վայելէ փառք, իշխանութի և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Օրհնեալ տր մեր յս քս։

Ժողովուրդն։ Ամէն։

Սարկաւագն։ Օրհնեա տր։

Քահանայն։

Տր ած օրհնեսցէ ✠ զամենեսեան։

Սարկաւագն։ Սաղմոս ասասցուք։

Սրբասացութիւն ըստ խորհրդեան աւուրն։ Յետ որոյ սարկաւագն ձայնեսցէ։

Ո՛չ ոք յերեխայից, մի՛ ոք։

Դպիրքն եղանակեսցեն։

Մարմին տէրունական, և այլ։

Եւ ապա եղանակեսցեն։

Որք ըստ քրովբէիցն։

Եւ 'ի սարկաւագացն վերաբերցի սրբազան հացն, և օրհնութեն բաժակին 'ի տր սեղանն։

Եւ մինչ նոքա երգիցեն, քահանայն խոնարհեսցի առաջի սրբոյ սեղանոյն, և խորհրդաբար աղօթեսցէ 'ի ծածուկ:

Ոչ ոք արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր ախտիւք և ցանկութեամբ մատչել 'ի սեղան քո, կամ սպասաւորել արքունական փառաց քոց. քանզի պաշտել զքեզ՝ մեծ և ահաւոր երկնաւոր զօրութեանցդ իսկ է: Սակայն վասն անչափ բարերարութեան քոյ՝ անպարագրելի բանդ Հօր եղեր մարդ, և քահանայապետ մեր երևեցար: Եւ իբր տ՟ր ամենեցուն այսմ սպասաւորութեան և անարիւն զենման զքահանայութիւն աւանդեցեր մեզ: Վասն զի դու ես տ՟ր ա՟ծ մեր, որ տիրես երկնաւորաց և երկրաւորաց: Որ 'ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս՝ սերովբէից տ՟ր, և թագաւոր Ի՟ղի: Որ միայն ս՟բ ես, և 'ի ս՟բս հանգուցեալ: Աղաչեմ զքեզ միայն բարերար, նայեա՛ յիս 'ի մեղուցեալ և յանպիտան ծառայս քո, և սրբեա՛ զհոգի և զմիտս իմ յա՟մ պղծութեանց չարին: Եւ բաւականացո՛ զիս զօրութեամբ ս՟բ Հոգւոյդ, որ զգեցեալ եմ զքահանայականս շնորհս, կալ առաջի սրբոյ սեղանոյս, և քահանայագործել զքո անարատ մարմինդ, և զպատուական արիւնդ: Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ մաղթեմ, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, և մի՛ մերժեր զիս 'ի ծառայից քոց: Այլ արժանի՛ արա մատուցանել քեզ զընծայս զայս յինէն 'ի մեղուցեալ և յանարժան ծառայէս քումմէ: Վասն զի դու ես՝ որ մատուցանես, և մատչիս, և ընդունիս, և տաս ք՟ս ա՟ծ մեր: Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկզբն Հարբդ, և ամենասուրբ և բարերար Հոգւովդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Եւ ընծայքն վերաբերեսցին 'ի սեղանն տ՟ր. և քահանայն խնկարկեսցէ 'ի վերայ սեղանոյն. և լուասցէ զձեռս աւելով:

Լուասցի սրբութեամբ զձեռս:

Եւ քարոզեսցէ սարկաւագն:

Եւ ես խաղաղութեան զտ՟ր:

Ժողովուրդն: Տ՟ր ողորմեա՛:
Սարկաւագն: Եւ ես հաւա:

Քահանայն՝ թէ սարկաւագ կայցէ 'ի խորհրդեանն, մինչ նա զքարոզն ասիցէ, համբուրեսցէ զսեղանն, և խաչակնքեալ ☩ զժողովուրդն, բազկատարած կայցէ առաջի սեղանոյն. և ասասցէ 'ի ծածուկ զաղօթս:

Տ՟ր ա՟ծ զօրութեանց, և արարիչ ա՟մ լինելութեանց, որ յանէութենէ զբնաւս 'ի գոյացութիւն ածեալ գոյացուցեր: Որ և զմեր հողեղէն բնութիւն այսպիսի ահաւոր, և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւոր: Դու տ՟ր՝ որում պատարագեմք զպատարագիս, ընկա՛լ առ 'ի մէնջ զառաջադրութիւնս զայս: Եւ աւարտեա՛ զսա 'ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան միածնի քոյ: Դեղ թողութեան մեղաց պարգևեա՛ ճաշակողացս զհացս զայս և զբաժակս:

'Ի ձայն.

Շնորհօք և մարդասիրութե̃ տն̃ մերոյ և փրկչին յի̃ քի̃, ը̃ որում քեզ հօր՝ միանգամայն և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութի̃ և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն։

Ժողովուրդն։ Ամէն։ Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։ Ողջոյն տուք միմեանց.

Եւ համբուրեսցեն զսեղանն, և զմիմեանս։

Ձայնեսցէ սարկաւագն։

Ահիւ կացցուք, երկիւղիւ։

Դպիրքն։ Առ քեզ ա̃ծ։

Սարկաւագն։ Պատարագ քի̃ մատչի։

Դպիրքն։ Ողորմութի̃ և խա։

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ ✠ 'ի վերայ ժողովրդեանն, և ասասցէ։

Շնորհք սէր և ա̃ծային սրբարար զօրութի̃ն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ եղիցի ընդ ձեզ՝ ընդ ամենեսեան։

Ժողովուրդն։ Եւ ընդ հոգւոյդ։

Սարկաւագն։ 'Ի վեր ընծայեցուցէք։

Դպիրքն։ Ունիմք առ քեզ տր̃։

Սարկաւագն։ Եւ գոհացարուք։

Դպիրքն։ Արժան և իրաւ։

Քահանայն ձեռնամած աղօթեսցէ 'ի ծածուկ։

Արժան է ստուգապէս և իրաւ ամենայօրդոր փութով միշտ երկիրպագանելով փառաւորել զքեզ հայր ամենակալ։ Որ քոյին անզննելի և արարչակից բանիւդ զանիծիցն բարձեր զկրձինն։ Որ ժողովուրդ քեզ առեալ զեկեղեցի սեպհականեաց զհաւատացեալս 'ի քեզ։ Եւ զմնելի բնութե̃ ըստ 'ի կուսէն տնտեսութե̃ հաճեցար բնակել 'ի մեզ։ Եւ նորագործ ա̃ծապէս ճարտարապետեալ զերկիրս երկին արար։ Ա̃ զի որում ոչն հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք 'ի փայլակնացայտ, և յանմատոյց լուսոյ ա̃ծութեանդ, եղեալ այդպիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութե̃, շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս։

'Ի ձայն։

Եւ ընդ սերովբէսն, և ընդ քերովբէսն միաձայն սրբասացութե̃ յօրինել նուագս, և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին, և ասել։

Սր̃ սր̃ սր̃ տր̃ զօրութե̃ց, լի են երկինք և երկիր։






Appo T. Viero Venet.

Jesus. Amor meus Crucifixus est.

Քահանայն բազկատարած աղօթեսցէ 'ի ծածուկ, մինչ նորա երգեսցեն ։

Սուրբ սուրբ սուրբ ես ճշմարտապէս և ամենասուրբ, և ո՛վ որ պանծասցի բովանդակել բանիւ զքո 'ի մեզ զանբաւ բարեգործութեանդ զեղմունս ։ Որ և անդէն իսկ 'ի նախնումն զանկեալն ընդ մեղօք՝ զանազան եղանակօք խնամեալ մխիթարեցեր՝ մարգարէիւք՝ օրինացն տուչութե՝ քահանայութե՝ և ստուերակերպ երնջացն մատուցմամբ ։ Իսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիք, ետուր մեզ զՈրդին քո միածին՝ պարտապան և պարտս, զենումն և օծեալ, գառն և երկնաւոր հաց, քահանայապետ և պատարագ ։ Զան զի ինքն է բաշխող. և նոյն ինքն բաշխի 'ի մէջի մերում միշտ անծախապէս ։ Զան զի եղեալ հաւաստեաւ և առանց ցնորից մարդ, և անշփոթ միաւորութե մարմնացեալ յածածին և 'ի սրբ կուսէն մարիամայ ։ Ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց. և յաշխարհահակեցոյց և յառիթն փրկութե մերոյ եկեալ կամաւ 'ի խաչն ։

Առեալ զհացն 'ի սրբ՝ յածային՝ յանարատ և 'ի պատուական ձեռս իւր.

Օրհ✠նեաց, գոհացաւ, եբեկ՝ ետ իւրոց ընտրեալ սրբ և բազմեալ աշակերտացն՝ ասելով ։

Առէք կերէք.

**այս է մարմին իմ ։**

Որ վասն ձեր և բազմաց բաշխի 'ի քաւութի և 'ի թողութի մեղաց ։

Նոյնպէս և զբաժակն առեալ.
Օրհ✠նեաց, գոհացաւ, էարբ՝ ետ իւրոց ընտրեալ սրբ՝ և բազմեալ աշակերտացն՝ ասելով ։

Արբէք 'ի սմանէ ամենեքեան.

**այս է արիւն իմ, նորոյ ուխտի, որ յաղագս ձեր, և բազմաց հեղանի 'ի քաւութի և 'ի թողութիւն մեղաց ։**

Նա զոյն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար որդիդ քո միածին ։ Նա իջեալ 'ի ստորին վայրս մահու՝ մարմնովն՝ զոր 'ի մերմէս ընկալաւ յաղագակցութե ։ Նա զնիգս

դժոխոցն ազատեալ հզօրեղա-
պէս, զմեզ միայն ծանոյց մեզ
ճշմարիտ ած, զածդ կենդանեաց
և մեռելոց ։

Եւ առեալ զընծայս ՚ի ձեռս ասասցէ ՚ի ցած ։

Եւ արդ՝ մեք տր ըստ այսմ հրամանատրութե՛ն յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քոյ ։ Յիշեմք զդորա՝ որ վն մեր զփրկագործ չարչարանսն, զկենդանատու խաչելութիւնն, զերեքօրեայ զթաղումն, զերանելի յարութիւնն, զածայէս համբարձումն, զնստիլն ընդ աջմէ քո հայր, զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք ։

Եւ դիցէ զընծայսն ՚ի վերայ սեղանոյն, և ասասցէ ՚ի ձայն ։

Եւ զքոյս ՚ի քոյոց քեզ մատուցանեմք, ըստ ամի, և յաղագս ամենեցուն ։

Դպիրքն ։ Յամի օրհնեալ ես ։

Մինչ դպրք երգիցեն՝ քահանայն բազկատարած աղօթեսցէ ՚ի ծածուկ ։

Օ քեզ արդարև տր ած մեր գովեմք, և զքեն գոհանամք հանապազ ։ Որ զանց արարեր զմերով անարժանութեամբս, այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս ։ Ոչ յաղագս մերոյ ինչ բարեգործութեան՝ յորոց յոյժ թափուր եմք, և միշտ ունայն գտանիմք հանապազ ։ Այլ ՚ի քո բազմազեղ ներողութիւնդ ցանկ ապաւինեալ՝ համարձակիմք մերձենալ ՚ի սպասաւորութիւն մարմնոյ և արեան միածնի քո տն մերոյ և փրկչին յոյ քոյ ։ Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։
Ամէն ։

Խաղաղութի ✠ ամենեցուն ։

Սարկաւագն ։ Այ երկիրպագես ։
Ժողովուրդն ։ Առաջի քոյ տր ։

Քահանայն խոնարհեսցի և ասասցէ ։

Երկիրպագանեմք և աղաչեմք, և խնդրեմք ՚ի քէն բարերար ած՝ առաքեա ՚ի մեզ, և յառաջի եդեալ յընծայս յայս զմշտնջենաւորակից քո, և զէակից տր հոգիդ ։

Եւ կանգնեալ խաչակնքեսցէ զընծայսն՝ ասելով ՚ի ցած ։

Որով զհաց օրհ✠նեալ մարմին
ճշմարտապէս արարեր տն մերոյ
փրկչին յոյ քոյ ։
Որով զհաց օրհ✠նեալ մարմին
ճշմարտապէս արարեր տն մերոյ
և փրկչին յոյ քոյ ։
Որով զհաց օրհ✠նեալ մարմին
ճշմարտապէս արարեր տն մերոյ
և փրկչին յոյ քոյ ։
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն
ստուգապէս արարեր տն մերոյ
և փրկչին յոյ քոյ ։
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն
ստուգապէս արարեր տն մերոյ
և փրկչին յոյ քոյ ։
Եւ զբաժակ օրհ✠նեալ արիւն
ստուգապէս արարեր տն մերոյ և
և փրկչին յոյ քոյ ։
Որով զհաց և զգինի օրհ✠նեալ
մարմին և արիւն ճշմարտապէս արարեր տն մերոյ և փրկչին յոյ քոյ՝
փոխարկելով հոգւովդ քով սրբով ։

Երիցս անգամ կրկնեսցէ զաղօթս. և սարկաւագն ՚ի ցած, Ամէն ։

Եւ քահանայն ասասցէ ՚ի ձայն։

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութիւն ՚ի քաւութիւն, և ՚ի թողութիւն մեղաց։

Եւ ապա տարածեալ զձեռս աղօթեսցէ ՚ի ծածուկ։

Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն, և զցանկալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի․ սրբոյ եկեղեցւոյ, և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, թագաւորաց աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց, կալելոց, վտանգելոց, աշխատելոց, և որք ՚ի պատերազմունս բարբարոսաց։ Սովաւ և օդոց շնորհեա զբարեխառնութիւն, և անդոց զպտղաբերութիւն, և ախտացելոց ՚ի պէսպէս ցաւս փութապէս զառողջութիւն։ Սովաւ հանգո՛ զամենեսեան յառաջագոյն ՚ի քո ննջեցեալսն՝ զեպիսկոպոսունս՝ զերիցունս՝ զսարկաւագունս՝ և զբնաւ ուխտ եկեղեցւոյ քում սրբոյ, և զամենեսեան՝ որք յաշխարհական կարգէ զարս և զկանայս հաւատով վախճանեալս։

՚Ի ձայն։

Ընդ որս և մեզ այց արասցես՝ բարերար Աստուած աղաչեմք։

Ժողովուրդն։ Յիշեա տէր և ողորմեա։

Քահանայն։

Ընծայելի սրբոյ կուսին մարիամու, և յովհաննու մկրտչին, ստեփաննոսի նախավկային, և ամենայն սրբոց՝ եղիցի յիշատակ ՚ի սուրբ պատարագս աղաչեմք։

Ժողովուրդն։ Յիշեա տէր և ող։

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն՝ ձեռնամած ասասցէ։

Առաքելոց սրբոց, մարգարէից։

Եւ մինչ սարկաւագն զքարոզն ասիցէ, քահանայն զաղօթս սկսցէ․ զի ՚ի միասին աւարտեսցեն։

Յիշեա տէր և ողորմեա, և օրհնեա զսուրբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քոյ, և ազատեցեր խաչիւն սրբով․ շնորհեա սմա զանշարժ ըզխաղաղութիւն։ Յիշեա տէր և ողորմեա և օրհնեա զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս, որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն ՚ի մեզ զբանն ճշմարտութեան։

Աստ յետ յիշելոյն զՊապն, յիշեսցի եւ առաջնորդն տեղւոյն ըստ պատշաճի և պատւոյն, թէ Պատրիարգ իցէ, թէ Արքեպիսկոպոս իցէ, և թէ եպիսկոպոս իցէ։ Բայց Կաթուղիկոսն, և կամ Եպիսկոպոսն Հայոց՝ եթէ իցէ հերետիկոս, կամ հերձուածող՝ ոչ երբեք, և ոչ ուրեք յիշեսցի։ Իսկ եթէ իցէ ուղղափառ, յիշեսցի միայն ՚ի թեմի, և ՚ի վիճակի իւրում, և ոչ երբեք արտաքոյ նորին։

՚Ի ձայն։

Եւս առաւել զսրբազան Պապն մեր՝ զտէր այս անուն։ և զերջանիկ պատրիարգն մեր՝ զտէր այս անուն։ Կամ զարքեպիսկոպոսն մեր՝ զտէր այս անուն։ Կամ զեպիսկոպոսն մեր՝ զտէր այս անուն։ Շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ։

Եւ ապա ՚ի ձախակողմն սեղանոյն քարոզեսցէ սարկաւագն ձեւով աղօթից։ Զոր մի ոք մտացածին կարծելով չջնջեսցէ, զի մեծին խորհրդոյ է ատացեալ զառաջնոց օրինացն։

Գոհութիւն և փառաբանութիւն․

Եւ ընդ սկսանել սարկաւագին զքարոզս, քահանայն զաղօթս ասիցէ, զի 'ի միասին աւարտեսցեն:

Օրհնեալ Տր և ողորմեալ և օրհ-նեա՛ զքո առաջի կացեալ ժողո-վուրդս, և զպատարագիս մատու-ցողս, և պարգևեա՛ սոցա զպի-տոյն և զօգտակարն:
Օրհնեալ Տր և ողորմեա՛ և օրհնեա՛ զուխտաւորս և զպատարագաբերիչս ե-կեղեցւոյ քո սրբոյ, և որք յիշեն զաղքատս ողորմածութբ. և հա-տո՛ Տր զպարգևս նոցա՝ ըստ ընդա-բոյս առատութե քո՝ հարիւրա-պատիկ աստ՝ և 'ի հանդերձելումն:
Օրհնեա՛ Տր և ողորմեա՛, և գթա՛ 'ի հոգիս հանգուցելոյն, հանգո՛ զնոսին, և լուսաւորեա՛, և դա-սաւորեա՛ ընդ սրբս քո յարքայու-թեն երկնից, և արժանի՛ արա ո-ղորմութե քում:
Օրհնեա՛ Տր և զհոգի ծառայի քոյ. այս անուն. և ողորմեա՛ նմա ըստ մե-ծի ողորմութեան քում, և հանգո՛ այցելութբ 'ի լոյս երեսաց քոց:
և եթէ կենդանի է, փրկեա՛ զնա յամ որոգայթից հոգւոյ և մարմնոյ:
Օրհնեա՛ Տր և զայնոսիկ՝ որք յանձ-նեցին մեզ յիշատակել յաղօթս՝ զկենդանիս և զհանգուցեալս. կա-տարեա՛ զկամս հայցմանց նց և զմեր՝ ընդ ուղղորդն, և որ լին է փրկութբ: Եւ վարձատրեա՛ բոլո-րեցունց զանանց և զերանելի բա-րութիւդ: Եւ զտեալ զխորհուրդս մեր տաճարացո՛ յընդունակութիւն մարմնոյ և արեան միածնի քոյ Տն մերոյ և փրկչին յի քի: Ընդ որում քեզ հօր ամենակալի՝ հան-դերձ կենդանարար և ազատիչ Տր հոգւովդ՝ վայելէ փառք իշխանու-թիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ զժողովուրդն՝ ասելով բարձր:

Եւ եղիցի ողորմութիւն մեծին Այ, և փրկչիս մերոյ յի քի ✠ ընդ ձեզ՝ ընդ ամենեսեան:

Ժողովուրդն: Եւ ընդ հոգւոյդ քում:
Սարկաւագն: Եւ ևս խաղաղութեան.
Ժողովուրդն: Տէր ողորմեա՛:
Սարկաւագն: Ամ սրբովք զորս:

Եւ անդէն ընդ քարոզութեանն՝ քահանայն բազկա-տարած խորհրդաբար աղօթեսցէ 'ի ծածուկ:

Ած ճշմարտութեան, և հայր ողորմութեան գոհանամք զքէն. որ 'ի վեր քան զերանելի նահապետացն՝ զմեր պարտաւորե-ցելոցս առաւել մեծարեցեր զբնու-թիւն: Զի նոցա Ած կոչեցար, իսկ մեզ հայր հաճեցար անուա-նիլ գթալով: Եւ այժմ Տր աղա-չեմք զքեզ՝ զայսպիսի առ 'ի քէն զնորոգ և զպատուական անուա-նադրութեանս շնորհ՝ օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո՛ 'ի մէջ եկեղեցւոյ քում սրբոյ:

'ի ձայն:

Եւ տո՛ւր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ երկնաւորդ հայր, երգել և ասել:

Եւ ժողովուրդքն բազկատարած եղանակեսցեն.

Հայր մեր, որ յերկինս ես:

Եւ մինչ նոքա երգեսցեն՝ քահանայն աղօթեսցէ 'ի ծածուկ:

Տր տերանց, Ած աստուածոց թա-գաւոր յաւիտենական, արա-րիչ Ամ արարածոց, հայր Տն մերոյ յի քի, մի՛ տար զմեզ 'ի փորձու-

թիւն, այլ փրկեա՛ 'ի չարէ, և ապրեցո՛ 'ի փորձութենէ։

'Ի ձայն։

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. Ամէն։

Քահանայն։

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան։

Ժողովուրդն։ Եւ ընդ հոգւոյդ քում։
Սարկաւագն։ Աստուծոյ երկրպագեսցուք։
Ժողովուրդն։ Առաջի քո Տէր։

Քահանայն խոնարհեսցի և ամենայն ժողովուրդն ընդ նմա 'ի վայր, և քահանայն աղօթեսցէ 'ի ծածուկ։

Որ աղբիւրդ ես կենաց, և բղխումն ողորմութեան Հոգիդ սուրբ, ողորմեա՛ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկրպագանեն մեծութեանդ քո։ Պահեա՛ զսոսա ամբողջս։ Տպաւորեա՛ յոգւոյ սոցա զձև մարմնոյ ցուցակի՝ առ 'ի ժառանգութիւն և 'ի վիճակ հանդերձելոց բարեաց։

'Ի ձայն։

Ք՟իւ Յ՟իւ Տ՟րամբ մերով, ընդ որում քեզ Հոգւոյդ սրբոյ և Հօր ամենակալի վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ քահանայն առեալ զՍ՟բ հացն 'ի ձեռս, սարկաւագն ձայնեսցէ բարձր։

Պռոսխումէ։

Եւ քահանայն բարձրացուսցէ [illegible] ժողովրդեանն՝ և ասասցէ։

'Ի սրբութիւն սրբոց։

Ժողովուրդն բարձր ձայնիւ։

Միայն ս՟բ, միայն տ՟ր, յ՟ս ք՟ս, 'ի փառս ա՟յ Հօր. Ամէն։

Քահանայն։

Օրհնեալ Հայր ս՟բ ա՟ծ ճշմարիտ։
Ժողովուրդն։ Ամէն։

Քահանայն։

Օրհնեալ Որդին ս՟բ ա՟ծ ճշմարիտ։
Ժողովուրդն։ Ամէն։

Քահանայն։

Օրհնեալ Հոգին ս՟բ ա՟ծ ճշմարիտ։
Ժողովուրդն։ Ամէն։

Քահանայն։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Դպիրքն։ Հայր սուրբ, Որդի։

Եւ մինչ նոքա երգիցեն զայս, քահանայն խոնարհեսցի, և աղօթեսցէ 'ի ծածուկ։

Նայեա՛ց Տ՟ր մեր յ՟ս ք՟ս յերկնից 'ի սրբութենէ քումմէ, և յաթոռոյ փառաց թագաւորութեան քո։ Եկ 'ի սրբել և 'ի կեցուցանել զմեզ. որ ընդ Հօր նստիս, և աստ պատարագիս։ Արժանի արա տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ, և 'ի պատուական յարենէ. և 'ի ձեռս մեր ա՟մ ժողովրդեանս։

Եւ զայս ասացեալ երկրպագեսցէ՝ և համբուրեսցէ զսեղանն, և առեալ զՍ՟բ մարմինն ողջ թացցէ յանապական արիւնն, և ասասցէ։

Տ՟ր ա՟ծ մեր, որ կոչեցեր զմեզ յանուն միածնի Որդւոյ քո քրիստոնեայս, և շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգևոր աւազանաւն 'ի թողութիւն մեղաց, և արժանի արարեր զմեզ հաղորդել Ս՟բ մարմնոյ և արեան միածնի քո։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր, արա՛ զմեզ

արժանի ընդունել զսուրբ խոր-
հուրդս զայս մեզ 'ի մեղաց թո-
ղութիւն ։ Եւ գոհութի՟ւ փառա-
ւորել զքեզ ը՟ որդւոյ և ս՟ր հոգ-
ւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս
յաւիտենից ։ Ամէն ։

Եւ բարձրացուսցէ առերև ժողովրդեանն, և ա-
սասցէ առ նոսա բարձր ։

Ի ս՟ր 'ի ս՟ր պատուական մարմ-
նոյ և յարենէ տ՟ն մերոյ և
փրկչին յս՟ի քս՟ի, ճաշակեսցո՛ւք սըր-
բութեամբ, որ իջեալ 'ի յերկնից
բաշխի 'ի միջի մերում ։ Սա՛ է
կեանք ✠, յո՛յս, յարութիւն, քա-
ւութիւն, և թողութիւն մեղաց ։
Սաղմոս ասացէք տ՟ն այ մերոյ,
սաղմոս ասացէք երկնաւոր թա-
գաւորիս մերոյ անմահի, որ նստի
'ի կառս քերովբէականս ։

Սարկաւագն ձայնեսցէ բարձր ։

Սաղմոս ասացէք տ՟ն այ ։

Դպիրքն եղանակեսցեն ։

Ք՟ս պատարագեալ բաշխի ։

Մինչ նոքա երգիցեն, քահանայն առցէ զմարմինն 'ի
ձեռն, և համբուրեսցէ արտասուօք ասելով զայս ։

Զո՛ր օրհնութիւն, կամ զո՛ր գո-
հութիւն 'ի վերայ հացիս և բա-
ժակիս ասասցուք, այլ յս՟ զքեզ
միայն օրհնեմք՝ հանդերձ հարբդ և
ամենաս՟ր հոգւովդ ։ այժմ և միշտ,
և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Դարձեալ ասասցէ ։

Խոստովանիմ և հաւատամ, զի
դու ես քս՟ որդի այ, որ բարձեր
զմեղս աշխարհի ։

Եւ բեկեալ արկցէ 'ի բաժակն արեան՝ ասելով ։

Լրումն հոգւոյն սրբոյ ։

Եւ ապա առեալ զմի մասն 'ի ձեռս իւր, ասասցէ
'ի ծածուկ արտասուօք և գոհութեամբ առ հայր ։

Հա՛յր ս՟ր, որ անուանեցեր
զմեզ անուանակցութեամբ
միածնի քոյ, և լուսաւո-
րեցեր մկրտութի՟ւ հոգևոր աւա-
զանին ։ Արժանի արա ընդունել
զսուրբ խորհուրդս զայս մեզ 'ի
մեղաց թողութի՟ն ։ Տպաւորեա՛ 'ի
մեզ զշնորհս հոգւոյդ սրբոյ՝ ո՟պ
'ի սուրբ առաքեալսն, որք ճաշա-
կեցին, և եղեն մաքրիչք ա՟մ աշ-
խարհի ։ Եւ արդ՝ ս՟ր հայր բարե-
րար՝ զհաղորդութիւնս զայս մա-
նաւորեա՛ ճաշակման երեկոյին ա-
շակերտացն՝ բառնալով զխաւար
մեղաց իմոց ։ Մի՛ հայիր յանար-
ժանութիւնս իմ ։ և մի՛ արգելուր
զշնորհս հոգւոյդ ս՟բ ։ Այլ ըստ
անբաւ մարդասիրութեան քոյ,
պարգևեա՛ զսա քաւիչ մեղաց, լու-
ծիչ յանցանաց ։ Որպէս խոստա-
ցաւ և ասաց տ՟ր մեր յս՟ քս՟, թէ
որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զա-
րիւն իմ, կեցցէ յաւիտեան ։ Արդ՝
արա՛ զսա մեզ 'ի քաւութի՟, զի որք
կերիցեն և արբցեն 'ի սմանէ, հան-
ցեն զօրհնութիւն և զփառս հօր
և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։
Ամէն ։

Խաղաղութի՟ ✠ ը՟ ամենեսեան ։

Գոհանամ զքէն քս՟ թագաւոր,
որ արժանի արարեր զիս
զանարժանս հաղորդել ս՟ր մարմնոյ
և արեան քո ։ Եւ այժմ ս՟ր աղա-
չեմ զքեզ, մի՛ լիցի սա ինձ 'ի դա-
տապարտութի՟, այլ 'ի քաւութի՟
և 'ի թողութիւն մեղաց, յաւող-

ջութիւն հոգւոյ և մարմնոյ, և ՚ի կատարումն ամ գործոց առաքինութեան։ Որ զի սրբեսցէ սա զշունչս իմ, զհոգի և զմարմին իմ. և արասցէ զիս տաճար և բնակարան ամենամաքուր երրորդութեանդ։ Զի ընդ սուրբս քո արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Յովհաննու ոսկեբերանին.

Գոհանամ և մեծացուցանեմ և փառաւորեմ զքեզ տէր ած իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուրս յայսմիկ՝ հաղորդակից լինել ածային և սոսկալի խորհրդոյ քոյ, անարատ մարմնոյդ և պատուական արեանդ։ Եւ այսորիկ զսոսա ՚ի բարեխօսութիւն ունելով, աղաչեմ յամ աւուրս և ՚ի ժամանակս կենաց իմոց՝ ընդ սրբութե քոյ պահեա զիս։ Որպէս յիշելով զբարեգթութիւնս քո, և կենդանի լինել ընդ քեզ՝ որ վասն մեր չարչարեցար և մեռար և յարեար։ Ոմ մերձեսցի տր իմ և ած խորտակիչն՝ կնքելով անձին իմոյ պատուական արեամբդ քով։ Ամենակարողդ՝ մաքրեա զիս սուրբ յամ մեռելոտի գործոց իմոց, որ միայնդ ես անմեղ։ Ամրացո զկեանս իմ տր յամ փորձութէ. և զպատերազմօղն իմ դարձո յետս պատկառեալ և ամաչեցեալ, որչափ յառնէ ՚ի վերայ իմ։ Ամրացո զգնացս մտաց և լեզուի իմոյ, և զամ ճանապարհս մարմնոյ իմոյ։ Եւ հանապազորդ ընդ իս ըստ անսուտ խոստմանց քոց, թէ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ՝ և ես ՚ի նմա։

Դու ասացեր մարդասէր, կացո զբանս ամ այն անլուծանելի հրամանաց քոց։ Քանզի դու ես ած ողորմութե և գթութե և մարդասիրութե, և պարգևիչ ամ բարեաց. և քեզ վայել է փառք հանդերձ Հարբդ և ամենասուրբ Հոգւովդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ ապա տեառնագրեսցէ զինքն, և խնդրեսցէ ՚ի Ճշմարտէն ամ զըղձալս հայցուածս անձին իւրոյ՝ և ժողովրդեան և աշխարհի. և թողութի խնդրեսցէ իւրոց յանցաւորացն թշնամեաց և ատելեաց։ Եւ անդէն առնու և զգուշութեամբ ճաշակեսցէ ՚ի մարմնոյն, և արբցէ ՚ի բաժակէն՝ ասելով։

Մարմին քո անապական լիցի ✠ ինձ ՚ի կեանս։ Եւ սուրբ արիւն քո ՚ի քաւութի և ՚ի թողութիւն մեղաց։

Եւ թէ սարկաւագ կայցէ, հաղորդեսցի և նա։ Եւ առցէ սարկաւագն զսկիհն, և դարձցի առ ժողովուրդն ասելով բարձր։

Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք։

Ժողովուրդն ասասցէ բարձր ձայնիւ։

Ած մեր և տր մեր երևեցաւ։

Եւ հաղորդեսցի նոր ձեռնադրեալն, բայց ոչ ՚ի բեմանն, այլ ՚ի յատին տալով զսրբութիւնն։ Եւ ամենայն արժանաւոր ժողովուրդն հաղորդեսցին։ Եւ յետ հաղորդելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն, և ասասցէ բարձր։

Կեցո տր ✠ զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, հովուեա և բարձրացո զսոսա՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Եւ յետ հաղորդութեն երգեսցեն ժողովուրդն։

Լցաք ՚ի բարութեց քոց։

Քահանայն ։

Գոհանամք զքէն Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ սուրբ զեկեղեցի, տաճար սրբութեան, ուր փառաբանի սուրբ երրորդութիւնդ ։ Ալէլուիա ։

Գոհանամք զքէն Քրիստոս թագաւոր, որ պարգևեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնով և արեամբդ քով սրբով ։ Ալէլուիա ։

Գոհանամք զքէն Հոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զեկեղեցի. անարատ պահեա հաւատով երրորդութեանդ՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան ։ Ալէլուիա ։

Սարկաւագն ։ Եւ ևս խաղաղ ։ Եւ ևս հաւատով ընկալ ։

Ժողովուրդն ։ Գոհանամք զքէն ։

Եւ քահանայն ասասցէ 'ի ծածուկ ։

Գոհանամք զքէն Քրիստոս Աստուած, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ 'ի սրբութիւն կենդանութեան ։ Սովիմբ պահեա՛ զմեզ սուրբ և անարատ բնակեալ զմեօք քո աստուածային խնամօքդ ։ Առաջնորդեա՛ զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց, և բարերարաց ։ Որով ամրացեալք յամենայն բանսարկուին դիմամարտութեանց, քում եւեթ արժանի եղիցուք լսել ձայնի ։ Եւ քեզ միայնոյ քաջայաղթ, և ճշմարիտ հովուիդ հետևել, և առ 'ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից, Աստուած մեր և Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոս ։ Որ ես օրհնեալ ընդ Հօր, և ընդ սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան ։

Անքննելի, անհաս, երրեակ ինքնութեանդ, հաստիչ՝ ընդունող և անբաժանելի միասնական սուրբ երրորդութեանդ, վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

Եւ ապա առցէ զաւետարանն որ 'ի ձեռն իւր. և երկրպագեալ համբուրեսցէ զսեղանն ։ Եւ իջեալ 'ի մէջ եկեղեցւոյն, ասասցէ զաղօթս ։

'Ի ձայն ։

Որ օրհնես զօրհնեալս, որք օրհնեն զքեզ Տէր, և սուրբ առնես զյուսացեալս 'ի քեզ ։ Կեցո՛ զժողովուրդս քո, և օրհնեա՛ զժառանգութիւնս քո ։ Զլրումն եկեղեցւոյ քոյ պահեա՛ ։ Սրբեա՛ զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ ։ Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով ։ Եւ մի՛ թողուր զյուսացեալս 'ի քեզ ։ Զխաղաղութիւն քո պարգևեա՛ ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, և զինուորեալ մանկանց նոցա, և ամենայն ժողովրդեանս ։ Զի ամենայն տուրք բարիք, և ամենայն պարգևք կատարեալք 'ի վերուստ են իջեալ առ 'ի քէն, որ ես Հայր լուսոյ ։ Եւ քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ։

Եւ ժողովուրդքն ասասցեն երեք անգամ ։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ ։

Եւ քահանայն դարձցի առ ժողովուրդն և ասասցէ 'ի ձայն ։

Կատարումն օրինաց և մարգարէից դու ես Քս Տր փրկիչ մեր ։ Որ լցեր զամ հայրական տնօրէնութիւնս քո ։ Լցո՛ և զմեզ հոգւովդ քով սրբով ։

Սարկաւագն ։ Օրհնեա ։

Քահանայն ։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն ։

Ժողովուրդն ։ Եւ ընդ հոգւոյդ քում ։
Սարկաւագն ։ Երկիրպագութիւն լուարուք ։

Քահանայն ։

Սուրբ աւետարանիս որ ըստ Յովհաննու ։

'Ի Հօրէն լուսոյ ։

Ի սկզբանէ էր բանն, և բանն էր ։

Ժողովուրդն ։ Փառք քեզ Տր Ած մեր ։
Սարկաւագն ։ Ո՛ր խաչիւս ասա ։

Քահանայն ։

Պահպանեա՛ զժողովուրդս քո Քս ։

Ժողովուրդն ։ Օրհնեցից զՏր յամենայն ժամ ։

Եւ քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն, և ասասցէ բարձր ։

Օրհնեա՛լք ✠ եղերուք 'ի շնորհաց Տր հոգւոյն, երթա՛յք խաղաղութեամբ․ և Տր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան․ Ամէն ։

Եւ դպիրքն ասասցեն զսաղմոսն․ լգ ։

Ի տէր պարծեսցի անձն իմ ։

Եւ ընդ սաղմոսելն՝ բաշխեսցի նշխար ժողովրդեանն ։ Եւ յաւարտմանն դարձցի քահանայն յարևելս, երկրպագեսցէ առաջի անդ սեղանոյն, և ասասցէ ։

Տր Ած Յս Քս ողորմեա՛ ինձ ։

Եւ մտեալ յաւանդատունն՝ մերկասցի 'ի զգեստուցն ։ Եկեալ առաջի սեղանոյն, երկրպագեսցէ երիցս, և երթիցէ խաղաղութեամբ ։

## ՍՐԲՈՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՍ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Յետ յարութեն Տն մերոյ Յսի Քսի ։

Եւ իբրև ճաշեցին, ասէ ցՍիմոն Պետրոս Յս․ Սիմոն Յովհաննու սիրես զիս առաւել քան զդոսա ։ Ասէ ցնա․ Այո՛ Տէր, և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ ։ Ասէ ցնա՝ Արածեա՛ զգառինս իմ ։ Դարձեալ ասէ ցնա, Սիմոն Յովհաննու սիրես զիս ։ Ասէ ցնա․ Այո՛ Տէր, և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ ։ Ասէ ցնա՝ Արածեա՛ զոչխարս իմ ։ Ասէ ցնա երիցս անգամ․ Սիմոն Յովհաննու սիրես զիս․ տրտմեցաւ Պետրոս, զի ասաց ցնա երիցս՝ թէ սիրես զիս․ և ասէ ցնա․ Տէր՝ դու զամ գիտես․ և դու իսկ զամենայն ճանաչես, և եթէ սիրեմ զքեզ․ ասէ ցնա Յս․ Արածեա՛ զոչխարս իմ ։ Ամէն ամէն ասեմ քեզ․ զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօտի ածէիր՝ և երթայիր յո՛ և կամէիր․ և յորժամ ծերասցիս, ձեռս 'ի վեր կալցես․ և այլք ածցեն քեզ գօտի, և տարցին՝ ուր ոչն կամիցիս ։ Զայս ասաց՝ նշանակել թէ որո՛վ մահու փառաւոր առնիցէ զԱծ ։ և զայս իբրև ասաց, ասէ ցնա, Եկ զկնի իմ ։

# ԱԼԷԼՈՒԻԱՅՔ

Ճաշու յինանց ։

կէր Գովեա՛ երուսաղէմ զտ՟ր և օրհ-
նեա՛ զա՟ծ քո սիոն ։
Էշ Գովեա՛ երուսաղէմ զտ՟ր և օրհ-
նեա՛ զա՟ծ քո սիոն ։
Էշ Տէր 'ի զօրութեան քում ուրախ
եղիցի թագաւորն ․ 'ի փրկութեան
քում ցնծասցէ յոյժ ։
Էշ Քեզ վայելէ օրհնութիւն ա՟ծ 'ի
սիոն և քեզ տացին աղօթք յէ՟մ ։
Էշ Տէր ո՞վ կայցէ 'ի խորանի քում․
կամ ով բնակեսցի 'ի լեառն ս՟ր քո ։
տր Տէր թագաւորեաց զվայելչութի՟
զգեցաւ․ զգեցաւ տ՟ր զօրութիւն
ընդ մէջ իւր էած ։
շր Ցնծացէ՛ք առ ա՟ծ օգնական է
մեր․ աղաղակեցէ՛ք առ աստուած
յակոբայ ։

Ալէլուիայք Ճաշու Համբարձման ։

Համբարձէ՛ք իշխանք զդրունս
ձեր 'ի վեր․ համբարձցին դրունք
յաւիտենից և մտցէ թագաւոր
փառաց ։
Համբարձաւ ա՟ծ օրհնութե՟ և տ՟ր
մեր ձայնիւ փողոյ ։

Ալէլուիայք Ճաշու Հոգւոյն ս՟յ ։

կէր Ողորմութեամբ տ՟ն լի եղև եր-
կիր, և բանիւ տեառն երկինք հաս-
տատեցան․ և հոգւով բերանոյ
ն՟ր ա՟մ զօրութիւնք ն՟ց ։
Էշ Ձայն տ՟ն 'ի վերայ ջուրց․ և ա՟ծ
փառաց որոտաց, և տ՟ր ինքն 'ի
վերայ ջուրց բազմաց ։
Էշ Ո՟պ իւղ զի իջանէ 'ի գլուխ և 'ի
մօրուսն ահարոնի․ և 'ի մօրուացն
իջանէ 'ի գրապանս զգեստու ն՟ր ։
Էշ Ընթացք գետոց ուրախ առնեն զ-
քաղաքն ա՟յ․ և ս՟ր արար զյարկս
իւր բարձրեալն ։
Էշ Հոգի քո բարի առաջնորդեսցէ
ինձ 'ի յերկիր ուղիղ ։
տր Յիշեա՛ տ՟ր զդաւիթ և զամենայն
հեզութիւն նորա ։
շր Համբարձան գետք տ՟ր․ և ամբար-
ձին գետք զձայնս իւրեանց․ և յա-
րիցեն գետք 'ի գնացս իւրեանց ։

Ալէլուիայք Ճաշու Յարութե՟ ։

աձ Դու յարուցեալ գթասցիս 'ի
վ՟ր սիոնի, ժամանակ գթա-
լոյ նորա հասեալ է ժամ ։
ակ Օրհնեցէ՛ք զտ՟ր յօրհնութիւն 'ի
նոր օրհնութի՟ նմա յեկեղեցիս ս՟ց ։
բձ Ծափս հարէ՛ք ա՟մ հեթանոսք,
աղաղակեցէ՛ք առ ա՟ծ 'ի ձայն ցըն-
ծութեան ։
բկ Արի՛ տէր ա՟ծ իմ 'ի հրամանս քո,
զոր պատուիրեցեր․ և ժողովք
ժողովրդոց շուրջ եկեսցեն զքև․
վասն այսորիկ 'ի բարձունս դա՛րձ
տ՟ր ։
գձ Ուրախ եղև իսրայէլ յարարիչ իւր․
որդիք սիոնի ցնծասցեն 'ի թագա-
ւորն իւրեանց ։
գկ Եկա՛յք և տեսէ՛ք զգործս ա՟յ, որ-
պէս զի ահեղ են խորհրդովք քան
զա՟մ որդւոց մարդկան ։
դձ Հաճեցար տ՟ր ընդ երկիր քո, և
դարձուցեր զգերութի՟ յակոբայ ։
դկ Յարեաւ ա՟ծ, և ցրուեսցին ամե-
նայն թշնամիք նորա․ փախեան ա-
տելիք նորա յերեսաց նորա ։

Ալէլուիայք Ճաշու Վարդավառին ։

կէր Ամպ լուսաւոր հովանի լինէր ն՟ց․
ձայն եղև յամպոյն որ ասէ․ դա է
որդի իմ սիրելի ը՟ որ հաճեցայ ։
Էշ Բարձրութիւնք լերանց նորա են,
նորա է ծով և նա արար զնա, և
զցամաք ձեռք նորա ստեղծին․ ե-
կա՛յք երկրպագեսցո՛ւք նմա․ անկ-

ցուք և լացցուք առաջի տն արար-
չին մերոյ ։
դհ Քո են երկինք և քո է երկիր,
զաշխարհս լրիւ իւրով դու հաս-
տատեցեր ։ զհիւսիս և զհարաւ
դու արարեր ։ Թաբոր և Հերմոն
յանուն քո ցնծասցեն ։

Ալէլուիայք ճաշու Վերափոխման, և Տապա-
նակին ։

կեր Արի տէր 'ի հանգիստ քո ։ դու
և տապանակ կտակի սրբութե՛ քոյ ։
եհ Ուրա՛խ լեր բեր ։
կմ Այսօր ծնաւ որ 'ի հօրէ էն ։
դհ Ուրա՛խ լեցին երկինք ։

Ալէլուիայք ճաշու Նաւակատեաց խաչին և
Եկեղեցւոյ ։

հր Սիրեաց տր զսիոն ։ և ընտրեաց
բնակել 'ի նմա ։ ասէ՝ այս է հան-
գիստ իմ յաւիտեանս յաւիտենից ։
'ի սմա բնակեցայց ։ զի հաճեցայ
ընդ սա ։
կեր Տո՛ւր զօրութիւն ծառայի քոյ ։
կեցո՛ զորդի աղախնոյ քոյ ։ և արա՛
առ իս զնշան բարութեան ։
եհ Ետուր երկիւղածաց քոց նշան ։
զի ապրեսցին յերեսաց աղեղան ։
դհ Տէր սիրեցի զվայելչութիւն տան քոյ ։
և զտեղի յարկի փառաց քոց ։
դհ Տէր 'ի տաճար սուրբ իւրում,
տր յերկինս յաթոռ իւրում ։
եհ Որպէս սիրելի են յարկք քո տէր
զօրութեանց ։ ցանկայ՝ և փափա-
քէ անձն իմ 'ի գաւիթս քո ։ սիրտ
իմ, և մարմին իմ ցնծասցէ առ ած
կենդանի ։
ուր Ետուր երկիւղածաց քոց նշան ։
զի ապրեսցին յերեսաց աղեղան ։
հր Որպէս փրկեցան սիրելիք քո, կե-
ցո՛ աջով քո, և լո՛ւր մեզ ։

Ալէլուիայք ճաշու աւուրց Պահոց, որք ամեն ըստ
ձայնից ։

աձ Հոգի քո սուրբ և բարի առաջ-
նորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ ։
ակ Տէր՝ մի՛ սրտմտութեամբ քով յանդի-
մաներ զիս ։ և մի՛ բարկութեամբ
քով խրատեր զիս ։
բձ Միտ իմ խռովեցաւ յիս, և եր-
կիւղ մահու անկաւ 'ի վերայ իմ ։
բկ Դարձ տր և փրկեա՛ զանձն իմ ։
կեցո՛ զիս տէր ըստ ողորմութեան
քում ։
գձ Վասն անուան քո տր քաւեա՛ զ-
մեղս իմ՝ զի բազում եղեն յոյժ ։
գկ Ողորմեա՛ ինձ տէր, զի հիւանդ եմ
ես ։ բժշկեա՛ զանձն իմ՝ զի խռո-
վեցան ոսկերք իմ ։
գձ Յիշեա՛ տէր զգթութիւնս քո և զո-
ղորմութիւնս քո, որք են յաւիտե-
նից ։
գկ Տէր ողորմութիւն քո յաւիտեան,
զգործս ձեռաց քոց մի՛ անտես առ-
ներ ։

Ալէլուիայք Շաբաթապահոց ։

եհ Եկա՛յք ցնծասցուք 'ի տէր, ա-
ղաղակեսցուք առ ած փրկիչ մեր ։
դհ Երգեցէ՛ք տն երգ նոր ։ երգեցէք
տն ամենայն երկիր, երգեցէք տն
և բարձր արարէք զանուն նորա ։
եհ Բարձր արարից զընտրեալն 'ի ժո-
ղովրդենէ իմմէ ։ գտի զդաւիթ ծա-
ռայ իմ և իւղով սրբով իմով օծի
զնա ։

Ալէլուիայք Այլոց կիրակէից ։

Աղաղակեցէ՛ք առ տէր ամենայն
երկիր, ծառայեցէ՛ք տն ուրախու-
թեամբ ։
Մտէք առաջի նորա ցնծութեամբ ։
ծանիրո՛ւք զի նա է տէր ած մեր ։

Աւելուածք ձայնի Մարտիրոսաց։

աձ Տէր սիրէ զիրաւունս, և ոչ ընդ-
վայր հարկանէ զա՟ծս իւր․ այլ յա-
ւիտեան պահէ զնոսա։
ակ Պարծեսցին սուրբքն փառօք, և ցըն-
ծասցեն ՚ի հանգիստ իւրեանց, և
բարձր արասցեն զա՟ծ բերանօք իւ-
րեանց։
բձ Պարծեսցին սուրբքն փառօք, և ցըն-
ծասցեն ՚ի հանգիստ իւրեանց, և
բարձր արասցեն զա՟ծ բերանօք իւ-
րեանց։
բկ Կարդացին արդարքն առ տէր՝ և
տէր լուաւ նոցա․ յամենայն նե-
ղութենէ նոցա փրկեաց զնոսա։
գձ Վ՟ն քո մեռանիմք զօրհանապազ․
համարեցաք ո՟պ զոչխար ՚ի զենումն։
գկ Ուրախ լիցին ամենեքեան որք յու-
սացեալ են ՚ի քեզ․ յաւիտեան
ցնծասցեն և բնակեսցիս դու ՚ի ն՟ս։
դձ Արդարքն ո՟պ զարմաւենիս ծաղ-
կեսցին․ որպէս զմայրսն լիբանա-
նու բազումք եղիցին։
դկ Բազում նեղութիւնք են արդա-
րոց՝ յամենայնէ փրկէ զնոսա տէր․
և պահէ զամենայն ոսկերս նոցա․
և մի ՚ի նոցանէ ոչ կորիցէ։

Աւելուածք ձայնի Հրեշտակապետաց։

Ողորմութե՟ ա՟ն լի եղև երկիր․ և
բանիւ տեառն երկինք հաստատե-
ցան․ և հոգւով բերանոյ ն՟յ ա՟մ
զօրութիւնք նոցա։

Համօրէն Մարգարէից։

Յեկեղեցիս օրհնեցէք զա՟ծ և զտ՟ր
յաղբերացն իսրայէլի։

Դաւթի և Յակոբայ։

Երդուաւ տ՟ր դաւթի ճշմարտու՟թ
և ոչ ստեաց նմա․ ՚ի պտղոյ որո-
վայնէ ն՟ր նստուցանել յաթոռ ն՟ր։

Ամենայն Առաքելոց։

Կացուսցես զնոսա իշխանս ընդ
ա՟մ երկիր․ և յիշեսցի անուն քո
ընդ ամենայն ազգս ազգաց։
Ընդ ամենայն երկիր ել բարբառ
նոցա, և մինչև ՚ի ծագս աշխարհի
են խօսք նոցա։

Նախահարցն։

Պատմէ զբան իւր յակոբայ․ զար-
դարութիւն և զիրաւունս ի՟հլի։

Գրիգորի Լուսաւորչին։

Համբերելով համբերի տեառն․ և
նայեցաւ առ իս և լուաւ աղօթից
իմոց։

Հայրապետաց և Վարդապետաց։

Քահանայք քո զգեցցին զարդա-
րութիւն․ և սուրբք քո ցնծալով
ցնծասցեն։

Ճգնաւորաց։

Երանելի են որք բնակեալ են ՚ի
տան տեառն․ յաւիտեանս յաւի-
տենից օրհնեսցեն զքեզ։

Կուսանաց։

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ ՚ի
հանդերձս ոսկեհուռս զարդարեալ
և պաճուճեալ։
Տարցին թագաւորի կուսանք ըզ-
հետ նորա, և զընկերս նորա տար-
ցին նմա։

Թագաւորաց։

Տէր ՚ի զօրութեան քում ուրախ
եղիցի թագաւորն․ ՚ի փրկութե՟
քում ցնծասցէ յոյժ։

Քառասնից, և երկուց բիւրուց։

Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր․
և հաներ զմեզ ՚ի հանգիստ։

Մեծի հինգշաբաթի։

Պատրաստ արարեր առաջի իմ սե-
ղան ակն յանդիման նեղչաց իմոց։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Ереван
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ